

ԿԱԴՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2008 թվականի առաջին կիսամյակում կատարված կադրային աշխատանքների հաշվետվություն

2008թ. առաջին կիսամյակում ՀՀ ԱՎԾ աշխատակազմում՝
աշխատանքի է ընդունվել 19 մարդ, որից՝

քաղաքացիական ծառայության պաշտոններում -11

քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում-8

աշխատանքից ազատվել է 11 մարդ, որից՝

քաղաքացիական ծառայողներ - 8

քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի

նշանակվածներ -3

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար ՀՀ ԱՎԾ աշխատակազմը անցկացրել է 9 մրցույթ, որից 1-ի արդյունքում մրցույթը համարվել է չկայացած, իսկ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմը՝ 3 մրցույթ:

Արտամրցութային կարգով քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակվել է 6 քաղաքացիական ծառայող:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, ՀՀ ԱՎԾ նախագահի հրամանով քաղաքացիական ծառայության երկրորդ և երրորդ դասի խորհրդականի դասային աստիճաններ են շնորհվել գլխավոր պաշտոններ զբաղեցնող 4 քաղաքացիական ծառայողի, իսկ աշխատակազմի ղեկավարի կողմից համապատասխան դասային աստիճաններ են շնորհվել առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող 22 քաղաքացիական ծառայողի: ՀՀ քաղաքացիական ծառայության առավելագույն դասային աստիճաններ շնորհվել են գլխավոր պաշտոններ զբաղեցնող 45 քաղաքացիական ծառայողի՝ ՀՀ ԱՎԾ նախագահի հրամանով, առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող 35 քաղաքացիական ծառայողի՝ աշխատակազմի ղեկավարի հրամանով:

Վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

	Գլխավոր պաշտոններ	Առաջատար պաշտոններ	Կրտսեր պաշտոններ
Վերապատրաստվել են	10	22	1
Ատեստավորվել են	14	20	15

Ուսումնական և արտադրական պրակտիկա է կազմակերպվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Ռուս-Հայկական (Սլավոնական) պետական համալսարանի, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի թվով 132 ուսանողների համար:

ՀՀ ԱՎԾ նախագահի հրամանով 2 քաղաքացիական ծառայող և աշխատակազմի ղեկավարի հրամանով՝ 2 քաղաքացիական ծառայող խրախուսվել են շնորհակալագրերով: